

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԾԱԿ ԿԱՐ ՈՒՆԷ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԵ Է ՈՒՂՂԵՒ ԱՌ  
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի  
ԳՈՂԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire  
Ձեռագիրներն եւ չեն դարձուր,  
ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆՆԻԷ

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրքերի համար	արեւիկ	50
» » վեցամսեայ		30
Շրջակայից » արեւիկ		60
» » վեցամսեայ		35
ԱՐՏՈՆԱՏՈՒՆԻ ՀԱՄԱՐ		
Տարեկան . . . . .	Տրանց	18
Վեցամսեայ . . . . .		10
ՌՈՒՍՈՅ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ		
Տարեկան . . . . .	Բուրի	7
Վեցամսեայ . . . . .		4
ԲՈՒՄԵՆՈՐԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԻՐԻ Է		
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱՌԵՐԸ		
Թերից վարչութեան վրայ և		

ԶՈՐԵՔՇԱՐԹԻ 2/15 ՄԱՅԻՍ 1901 ԲԱՍՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 89

## ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՊՏՈՅՑ ՄԸ

### ՀԷՆՐԻ ՏՕՌԼԷԱՆ

Փոռ-Սայիտ. — Այս է Եգիպտոսի էն չիկ և էն սիրուն ծովեզերեայ բազաբը Միջերկրականի ծովուն վրայ, Սուէի զանալին բերանը՝ ուր առաջին անգամ կիջնէ ճանապարհորդ մը շոգենաւէն՝ այցելելու համար փարաւաններու երկիրը:

Չիկայ լեզու մը որ չի խօսուի այդ պատիկ քաղաքը, ոչ ալ դրամ մը որ չանցնի ֆրանսերէն, յունարէն, իտալերէն, արաբերէն, անգլերէն, թուրքերէն, հաւասարապէս կը խօսուին: Ֆրանգը, սուն, նախօլէօնը, Սթէպլէնը, կիլէն, մէճիտիլէն (16 դրժ), ըէալը բազաբին ընթացիկ գրամներն են: Հազուամեայ տեսակ յոսանակ: Նորաձեւութիւն, առաջին անգամ այդ բազաբը կը մտնէ ու հոնկէ կը տարածուի Գահիրէ ու շրջակայները: Ահա այս է Բոռ-Սայիտը մէկ խօսքով, զոր «կեզծ ու մաքսանենք» մակդիրով մկրտել ուզած է Հանրի Տօլէան՝ «Մաթէն»ի վերջին թիւերէն միուն մէջ:

Հէնրի Տօլէան նկարագրել ըսկսեց իր Եգիպտոս ճամբորդութիւնը՝

« Գանալ կը մտնենք, կ'ըսէ, շոգենաւը կանգ կ'առնէ: Նաւուն մէջ լուր մըն է կը տարածուի « Իբր թէ Տրուէթին բռնուելուն բան չէ մնացեր»: Տարակոյ չի կալ թէ այդ լուրը ցամաքէն հաղորդուած էր պարզապէս շոգորութիւն համար մեր անգլիացի ուղեկիցները որոնք շոգենաւին ճամբորդներուն 1/2 կը կազմէին:

Եկուր տես որ պաղարինութեամբ ու սկիպտիկութեամբ մը ընդունեցին անգլիացիք այդ լուրը: Ատոնցմէ մէկը խոստովանեցաւ իսկ թէ առջի օրէն արդէն կը դատապարտէր Հարա-Ափրիկեան պատերազմը: Վերջապէս շատ քիչ ետանդ շատ քիչ ոգեւորութիւն թռանալով լուրերուն համար այդ անգլիացի կողմէն, ահա տեսածս:

Գնան և չորս ժամ Բոռ-Սայիտ մընալէ վերջը ճամբայ կ'ընենք դէպի իսամայիլիէ գանալին վրայ սիրուն

գիւղաքաղաք մը, ուրկէ կը հասնինք Սուէզ (Փոռ-Սայիտէն մինչև Սուէզ ճամբորդութիւնը գանալէն՝ կը տեսնուին և չորս ժամ միջին հաշուով Շոգենաւ մը կ'ընայ տասը ժամուան մէջ ալ կատարել այդ ճամբորդութիւնը, բայց գանալին մէջ արդիւուած է ու է շոգենաւի մը՝ որ շոգեալ մղոնէն աւելի բայլ առնել):

Կը հասնինք Սուէզ, կարմիր ծովուն վրայ բանուկ և վաճառաշահ քաղաք մը: Կը սպասենք հնաու շոգենաւին որ Հնգկաստանէն կուգայ, թերես գտնուի բարեկամներ շոգենաւին մէջ որ մեզի լուրեր հաղորդեն այն կողմէն: Շոգենաւը կը հասնի, ոչ սք մեր ծանօթներէն: Գիշերուան թռչնոյ մը պէս անտեսանելի լուռ ու մունջ շրանցքը կը կտրէ կանցնի:

Գահիրէ. — Առաջին մէկ շաբաթ մնաց, դեռ եգիպտոսը յաւակնաւոր բան մը չի տեսներ: Իրաւ է թէ Գահիրէի մէջ փնտաւու է կ'ընեն բուն Եգիպտոսը: Սուէզէն երկվթուրին առաւօտեան ժամը 10ին կը մեկնի ու ցորեկէն վերջը ժամը 3ին քառորդ մնացած Գահիրէ կը հասնի:

Գահիրէ՛ ինչ մեծ ոգևորութիւն: Կատրով բռնաբանները դէպի կէզերէ, (արդարեւ Գահիրէի մէջ հետիտան բռնաբանի սովորութիւն չի կայ ինչպէս Պէտրիք Տերէի բիացան Պոլիս և Շէրիֆ փաշայի բիացան Աղեքսանդրիա), անգլիացի սպայներու և անգլուհիներու հացկերոյթները, պտոյտները դաշտային զոր իշու վրայ հիծած կը կատարեն անգլիացի զբօսաշրջիկները — Եգիպտոսի էջերը 1889ի ցուցահանդէսին առաջին անգամ ըլլալով ցուցադրուեցան փարիզի մէջ —: Անգլիացին բաց աստի հաճոյքով մտիկ կընէ իր առաջնորդողին վայելուչ խօսակցութիւնը:

Բայց եթէ կ'ուզէք տեսնել այն բաները որ միայն Եգիպտական երկրին յատուկ են, գնացէք Մասր-Աթիայ գիտնցէք հետաքրքրական մեկիթները: Այցելեցէք էլ-Ազհարի համալսարանը ուր մէկ բանի հազար աշակերտներ Գուրան կը սորվին իրենց մարմինը ետի առջի երեքցնելով:

Միֆթիներու և վարդապետներու այդ անդաստանին մէջ կը պտորատուին իսլամ ապագայ սիրունները:

նուաճելու համար հոռոյներու արքայութիւնը և վերստին գրաւելու կորուսեալ եկիրները:

Տարրինակ բան մըն ալ պատմեմ ձեզի կըսէ, Հէնրի Տօլէան:

— Ելեքուրական թռամվէյի գիծ մը հաստատուած է մինչև Բուրգերը որ մէկ ժամ կը տես Գահիրէէն:

Իմ ծանօթներէս փաշայ մը որ 30 տարիներէ ՚ի վեր Եգիպտոս կը բնակի, առաջին անգամ ըլլալով Բուրգերը կ'այցելէր, փառք այդ թռանվէյին:

Ճանբան իմ իշապանիս կը հարցնեմ թէ Արքայութիւն պիտի երթա:

— Փառք Ատոնոյ, քանի որ օրը հինգ անգամ աղօթքս կ'ընեմ, ինչո՞ւ չի պիտի երթամ Արքայութիւն կըսէ: Բիւռամիտը, ահաւասիկ մօտ ենք. ոչ թուռիսները, ոչ նկարիչները և ոչ կարուսանները չեն վրդովի վեհութիւնը այդ աշուար Բուրգերուն որի վրայ կ'ընային քառասուն դարեր:

Բուրգին մօտը մուրաղիաններ կան որ նախօլէօնի այդ խօսքը գիտեն ու ամեն անգամ որ թուռիսի մը կը պատահին օձիկը թող չեն տար: — Քառասուն դարեր ձեզ կը գիտեն. պախշիչ, պաղշիչ, — կը մըմտան:

Նեղոսը իր առատաբուխ գթութեամբ կարգասաւորէ Ֆէլլահին հերկած հողը: Իսկ Անգլիա կը կարծէ թէ անվրդով պիտի տիրէ այդ արգասաւոր երկրին:

Տեսէ՛ք, անհետացած է հորիզոնէն այն թերթը որուն գազաթը գրուած էր թէ՛ «Անգլիան պաշտօնապէս յանձն առած է Եգիպտոս, վերադարձնել Եգիպտացիին»:

## ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈՒԷԹՕՈՒԻԱ. — Պատերազմի դաշտին վրայ գտնուող Պօէրնեթոնթիւր մօտաւորապէս 16,000 ըլլալ կը թուի: Թշնամին նորէն սկսած է հաւաքուիլ թռանալով արեւելեան և արևմտեան կողմերը:

Ճէնէնալ Գամպէլ Միտէլլուրիէն վերադարձած պահուն՝ հազարի չափ Պօէրնեթ բաւական նեղեցին զինքը:

— Մայիս 19ին կը հեռագրեն թէ Տիկին Պօթա ուղղակի Անգլիա մեկնած է: Լօրա Գիշերի հաւանութիւնը ըստացած է երթալ Պ. Բուրգերը անանի և հաշտութեան վրայօք բանակցելու համար:

Փարիզ — Կոմս Թօլմիթօյ փարիզ կ'սպասուի: Կառավարութիւնը խիստ զգուշութիւն կ'ընէ որ ուսանողներու կողմէն ցոյցեր տեղի չունենան:

## ԲԱՆԱՍԵՐ ՄԵՐ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բաւական է կարգաւ ուշի ուշով հետեւեալ շահեկան գրութիւնը զոր հաճոյքով կը տպենք ստորև, գիտնալու համար թէ որ աստիճան կարելոր է մեզ քաջալերել Պ. Պրամալեանի առաջարկած ձեռնարկը, այնքան արգիւնաւէտ:

Ինչպէս յայտնի է շատերու, հատկապէս կան մասնախորութիւններ կատարելու համար Ն. Ս. Ս. Վէ՛. Հայրապետի հրատարակեալ Կրթական Կարգաւորութեան մասնագէտներու յանձնարարութեամբ կովկաս այցելած էի չորս տմիս առաջ: Իմ այս բացակայութեան միջոցին «Բանասեր»ի տպագրութիւնը կը շարունակուեր: Նոյնը պիտի լինի եւ յառաջիկայ տարուան համար:

Ուռուճական ուղեւորութեանս արդիւնքը մաս առ մաս պիտի հաղորդեմ «Բանասեր»ի ընթերցողներուն՝ ՄԵՐ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ վերնագրով մասնաւոր յօդուածներով, որոնք պիտի պարունակեն մեր Հին վանքերու, բերդերու, գեղարուեստական ու մասնաւոր ճարտարապետական մնացորդներու, Հին արձանագրութիւններու և ձեռագրաց իւրկասի պատմութեանը, հանդերձ մանրամասն անդեկութիւններով, հնարասական և պատմական ծանօթութիւններով և արձանագրութեանց ստղծ և անթերի հրատարակութեամբ, որով յետոյ պիտի կազմուի իմ ՀԱՅ-ԱՐՁԱՆ անուն երկստորութիւնը: Ծանրանալով մեր արձանագրութեանց կարեւորութեան վրայ, ինչպէս «Մշակ»ի մէջ ալ շեշտած եմ արդէն («Մշակ» 1900 զեկտ. 8) բացարձակ կերպով կարող եմ ըսել թէ մենք՝ Հայերս՝ չունինք գիտնական ուղղութեամբ հրատարակութիւն մը որ կորնայ գահացնել հայապատիւթեամբ պարտապօր բանասերները, ինչ որ հրատարակած

են, և կամ, աւելի ճիշտը՝ հրատարակել փորձած են Շահախախտման, Չարախան և վերջերս Ալիշան, լի են անհերքելի սխալներով, և՛ հազիւ թէ պարունակեն արձանագրութեանց կէս մասը միայն: Յիշեալ հեղինակներու հրատարակած արձանագրութիւնները բնագործներու հետ անձամբ բազմաթիւ քննարկելու արժանացան: Թէ՛ որ աստիճանի սխալ են արդէն հրատարակուած արձանագրութիւնները՝ բաւական է բազմաթիւ հետեւեալ երկու կրտորները միայն, որոնց մին իմ անձամբ օրինակածն է, իսկ միւսը Շահախախտմանի (\*):

ԻՄ.

«Ի թմրու Չէ ի կամս Աստուծոյ հզօրին այս իմ հրամանս և արձան սահմանի Շահախախտի Մանգանդորթայտուցեւի որդոյ Չարախանի Ամիր Սայասալարի Հայոց Մեծաց և Վրաց զոր գրեցի յիմ շինած ժամատանտ սուր զգեղն Շարխաշէն ի սուրբ կարասեռս յիշատակ հոգոյ իմ և խօշաբին և յարեւատութիւն որդոց մերոց և կրկին հաստատեցի զիմ հարսն հրամանն գիրն որ դրած են ևս ի ժամատանտ որ տվել էր զգեղն Որդկան և զՏաճկամարցն և աղատ էր արարեալ զամենայն հայրենիք սոցա որ ի զատարի և հաստատեցի որ արեղայ որ այրող լինի կամ աղմուկ անէ զիշխրութի շտանտ ոնել ստացուած տիրունի եղիցի արդ կթէ որ ի թագաւորաց կամ յիշխանաց հանել ջանա զմեր պարբեւս նզովեալ եղիցի յԱյ ամէն»:

Շահախ.

«Ի թմրու Չէ. Ի կամս Աստուծոյ հզօրին այս իմ հրամանս և արձան սահմանի Շահախախտի, մանաւանդ որ թախտեցեւի որդոյ Չարախանի ամիր սայասալարի Հայոց մեծաց և վրաց զոր գրեցի յիմ շինած ժամատանտ սուր զգեղն Շարխաշէն ի սուրբ կարասեռս՝ յիշատակ հոգոյ իմ և խօշաբին, և յարեւատութիւն որդոց մերոց: Եւ կրկին հաստատեցի զիմ հարսն հրամանն, գիրն որ դրած են, ևս ի ժամատանտ որ տուեալ էր զգեղն Որդկան, և զՏաճկամարցն, և աղատ էր արարեալ զամենայն հայրենիք սոցա՝ որ ի զատարի, և հաստատեցի՝ որ այրող լինի և աղմուկ անէ, զիշխրութի շտանտ անել, ստացուած տիրունի լիցի: Արդ՝ եթէ որ ի թագաւորաց կամ յիշխանաց հանել ջանայ, մեր մեղացն պարտական եղիցի, ամէն»:

Այս արձանագրութիւնը, որ ամբողջ կրկնապատ է, կը գտնուի Յովհաննա վանուց գաւթի դրան արտաքին բարաւորին վրայ: Տեղւոյն վրայ բազմաթիւ ըրած միջոցն ինչ կօգնէր բարձր. կորին վարդապետ, որ շատ զարմացաւ թէ ինչպէս կարելի է այս անսակ խոշոր սխալներ գործել: Երբին վեհափառութիւն խրեման Հայրիկ զգալով իմ վերեւ յիշած ծրագրի համեմատ գիտնական աշխատութեան մը պատճառ, հրամայեց ինչ՝ ամեններն անցունել ի կողմիս, ընծայելով հարկ եղած ամէն բարոյական դիւրութիւն արձանագրութիւններ հաւաքելու համար: Եւ արդէն բաւական նիւթեր ու լուսանկարներ հաւաքեցի այս առաջին ուսումնական ուղեւորութեանս միջոցին:

Վեր ի վերայ գաղափար մը տարու համար այս առաջին ուղեւորութեանս արկեանց վրայ, պարտ կը համարեմ յիշատակել թէ սոթիմ ունեցայ այցելել Էջմիածնայ, Հոփփփի, Շողակաթի, Գայիսնի, Չուարթի:

(\*) Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և ճիւղ գաւառացի Արարատայ, երես 101. Էջմիածնի, 1842:

նոց՝ Օշականի, Մոզու, Յովհաննա վանուց, Սաղմոս վանուց, Սեւան, Աղեքսանդրապոլի մեր հին մենաստաններն ու տաճարները, օրինակել այս ազգային յիշակերտներու մէջ ամբողջութեամբ զարաւոր արձանագրութիւնները, ճշտելով անճիշտներն և ի լոյս հանելով անտիպները, որոնք մեծամասնութիւն կը կազմեն: Լուսանկարել տուի կամ անձամբ լուսանկարելու մեր բոլոր այս և ուրիշ պատուական հուշարձաններ: Անձամբ կազմարեցի յիշեալ արձանագրութեանց կարեւորագոյնները: Նաև հետազոտեցի նոյն հաստատութեանց մէջ հաւաքուած ձեռագիրները, անտիպ գործեր իսկ երեւան հանելու բարեբախտութիւնն ունենալով:

Երկրորդ ուղեւորութեանս վերապահած եմ այցելել և ընել Շուրաբի, Հաղարատի, Սանահնի, Մարցի, Հաղարծնի, Խաչերի, Գոշ-Միլիթարի, Մակարայ և Վարազայ վանուց, Արատաֆայի, Գանձակի, Իգիլդի, Թարթարի և շրջակայից, Գանձասարի և Գանձասարի ձորով Լաչին-յաղայի, նոյնպէս և Գանձասարի շրջակայ Ս. Յակոբ ու Ս. Գեորգ վանուց, Խօթա վանքի ու շրջակայից, Այրուճիկի, Սօթ լեռանց շրջակայից, Գեղարբունեաց, Երբալայիցի և շրջակայից, Փաշաբենդի, Գեղարբունեաց, Սեւանոյ լճափի, Չարալուի, Ելենովայի մտակայ Այրիվանուց և նորա շրջակայ լեռանցամիջի, Օրդալուի, Դարաչիակի, Կեչառու և այլ մերձակայ վանօրէից, Բնու, Արաբքանդի, Արաբքանի, Եղվարդի, Արաբքանի, Բերախանի, Դրբլի, Արաբքանի հարաւային ստորտը գտնուող բազմաթիւ վայրերու, Գիշաղիկամ Հատիճոյ վանուց, Երախի և մանաւորապէս Անույ, Խօշալանքի, Բազարանի, Յսնոյ, Կարդոսի, Կորթայ, Իկտիլի և Արձան ըրող բոլոր ազգային հուշարձանները:

Երրորդ գիտնական արշաւանք մըն ալ պատի կատարեմ նորէն գեպի Էջմիածնի և անտի խորվիրայ, Հին-Շախիճեան, Երն, ջակ, Կարմիր վանք, Արուիս, Օրդուբազ, Մեղրի, Ղափան, Հայիճար, Արձանիք, Երեց մանկանց վանք, Տաթև, Միւս Հալիճար, Երեւն, Գեորգի, Երեւնական, Արտաւանք, Ղարաբաղ, Գեղարդ, Դրբլ-բուլաղ, Զրվէ, Գանաբեռ ու Երեւան:

Իսկ եթէ պարագաներն ու միջոցներն են, Ս. Օծովեան բարձր հրամանին համաձայն որոշած եմ Պարսկահայաստան և Տաճկահայաստան ալ անցնելով հետազոտել ազգային հուշարձանութեան թանկագին գտններն ու անսպաս ազգիւրները, անցնելոյն պատմութիւնն անմոռաց և անկորուստ պահելու նպատակով:

Արդ ներկայիս անգամ մըն ալ պարտիմ հրապարակու մտտեցանել երախտագիտական զգացմանց անկեղծ հաստատեցն առ Վեհ. Հայրիկն մեր, որ հանցեալ ինչ յանձնարարել այն անսակ աշխատութիւն մը՝ զոր ի մանուկ տիտց կը սիրէի հագում և որուն նուիրուեցայ յաւեր: Բայց պէտք է գիտնալ որ այս տեսակ աշխատութեան մը համար նիւթական աշխատութեան ալ պէտք կայ. վասն զի երթեալի, գիւղերու մէջ ապրելու, հարկ եղած տան գիւղացիներէ փոքր ծառայութիւններ ինչպէս, կարեւոր հուշարձանց լուսանկարներն անելու և այլ մանր մունր լաներու համար ծախքեր հարկաւոր են: Այս գործին յաջողութեան համար հազար բողբի մը բաւական է կարծեմ: Եւ բացարձակապէս կը յայտարարեմ թէ իմ բոլոր աշխատանքս, կրկնէր տանջանքներու և ընելիք գոհողութիւններու փոխարէն կողմէ մը իսկ վարձատրու-

թիւն չեմ պահանջեր ոչ որից. ևս ինքզինքս վարձատրուած կը նկատեմ այն առնէն երբ յաջողիմ պատրաստել ՀԱՅԱՍՏԱՆ աշխատութիւնս: Արդ եթէ ուրիշ հասարակապետներ ալ նիւթական օժանդակին այսպիսի ձեւերով մը ի կատար անան համար՝ այն ժամանակ իրական արձան մը կանգնած պիտի ըլլան մեր հայրենի աւերակներու մնացորդ նշխարներով ու նշմարներու, իսկապէս արժանի ՀԱՅԱՍՏԱՆ անսանակաշուքեան:

Այս համոզմամբ և իմ խոնարհ ջանքեր գնահատող ազգայիններու աջակցութեամբ որոշած եմ բանալ հանդանակութիւն մը սրոյ արդիւնքը միմիայն յիշեալ նպատակի իրագործման պիտի յատկացուի: Ուստի հրաւիր կը կարգամ յարգելի ընթերցողաց որ հաճին մասնակցել սոյն հանգանակութեան, խոստանալով հանդիտի միջոցաւ հետզհետեւ հրատարակել նախատեսուած նունները: Ուրիս եմ որ այսօր իսկ կարող կը լինիմ հանդանակութեան առաջին ցուցակն հրատարակել:

- Մեծ. Տիրաբ Միւսս Չերազ ֆր. 20
- Յ. Խաչատուր « 50
- Հոգեւոր Հովի Հայոց Փարբի Տ. Վառձապուհ Գ. Ք. Բիւրախան « 30
- Յակոբ Գարբիլեան « 20
- Կ. Յ. ԲԱՍՄԱՉԵԱՆ

ԺԱՍՏԿՈՒԹ ԲԱՆԱՆԱՅ ՍԸ

Տ. Գարբիլե Ք. Չ. Չինճիրճեան հեռուեալ գրութիւններն զրկած է խմբագրութեանս, խնդրելով հրատարակելու զայն «Նոր-Օր»-ի մէջ, յանձնելով հանրութեան արդար գատաստանին:

... Խմբագիր «Նոր-Օր» օգտաւատ թերթի Ուրախութեամբ և զոհուակութեամբ կարգացի Չեր Պատ: Լրագրի 88երորդ թուոյն մէջ «Ժամագործ Գահանայ մը» խմբագրին տակ խիստ հետաքրքրական գրութիւն մը Ս. Օ. ստորագրութեամբ: Պատուարժան ու անողոքական յօդուածագիրը հետաքրքրելով ժամագործութեամբ պարսպող Գահանայի մը նկատմամբ, զարմանք կը յայտնէ թէ ինչպէս տեղւոյս Ազգային Վարչութիւնը թոյլ կուտայ Գահանայի մը որ խաղաղաբար զուլուր ու ակնոցը աչքը, ժամագործութեամբ պարսպուի: Վերջապէս Պ. յօդուածագիրը հրապարակու Ազգիս ուշադրութիւնը կը հրաւիրէ զպիտ այդ ժամագործ Գահանայ:

Իրաւի զարմանալի է որ Գահանայ մը՝ ժամագործութիւն ընելով սպրուստը հանել: Բայց ինչո՞ւ զարմանալի չըլլար այն մեղքը լուծելու որ կը տիրէ Գահանայի մերձիկ մէջ, որոց ըզով պարտաճանաչութիւն բարդ ու է նախակութեան զորի է: Խօսքս ոչ թէ հստարակ և արուեստաւոր անձանց է, այլ պարզապէս բարձրաստիճան անձնաւորութեանց վրայ է որոց ճանաչողութիւնը, զատողութիւնը ու զգացումը մասնաինչ ընել կուգեմ: Կարծեմ ընթերցողներուն ծանօթ է թէ Գահանայ ներկայանալով տեղւոյս Ազգային Վարչութեան իբր Գահանայ ինքզինքս ճանաչուցած էի: Բայց ես ալ կը զարմանամ թէ ինչո՞ւ համար մերձեցին գիտ ըսելով թէ «Գահանայի պէտք չունինք»:

Ես Ազգին վրայ բոս ըլլալու համար չեկայ, եթէ հնարէ ըստ կարեաց ծառայելու և օգնելու:

Թեպէտ և այսօր, փառք Աստուծոյ, մտմագործութիւն, ազամանգաւաճութիւն և այլն և այլն պատուաւոր անձանց յատուկ գործով զբաղելով սպրուստ կը հանեմ բայց «Երանի թէ Չ» տարիներ առաջ առաջ գիտնալի և ճանաչի և կամ ընչ մը Յակոբ Աստուածաբանի իմաստութիւնը ու նենայի: Ես Եգիպտոս եկած առնես մի բանի հարիւր ոսկիներ չունիլի, անձնական տկարութեանս համար եկայ, և այդ առթիւ իբր Գահանայ ուղեցի ծառայել:

Բայց Առաջնորդարանը մերձեց ստորկելով թէ «տեղւոյս Գահանայը անթի պիտի մեռնի ուրեմն...»:

Ազգին հարապատենք երբեք հաց չեն մտար, տեսայ ապագան և զարհուրեցայ, ստուկացի խարուած լինելուս: Ապրուստի միջոց չունիլի ինչ ընեմ, սխալ ժամագործութեան և այսօր փառք կենսաւորիկ ժամացոյց ալ կը շինեմ, կը նորոգեմ, նոր ժամացոյցներ ալ կը ծախեմ և երբեմն արդարեւ ալ կ'ստանեմ կոտսաւ, բացի արուցնէ սակս մէջ ալ ընտանեացս և զարակացս համար եկեղեցի ալ ունիմ ուր հոգեւոր ու երկաւոր միթարութեամբ ամեն օր կը լցուինք:

Ուստի և սիրեցայ զիմ չեմ մեղանչեր, մահս մտ է կը վախում... որովհետեւ հայրս Աւետարան և մայրս շնորհալի ընդ հանրական է, պատասխանատուութեան կը ստուկամ. բայց զգեստս Ազգիս կը վերաբերի եթէ իրենց համար անպատուութիւն կը համարին, կրնան դիմել և կազմել արգարատեան մը՝ ընելու՝ գատեղու և ինքզինքնիս արդարացնելու:

Եթէ բան մը ունին ըսելիք հրապարակու խօսիւն և խօսել տան. յայնժամ մեր սիրելի և Ազգիս արձանագատութեան նախանձանդիրք պիտի հասկընան և կարծեմ զո՞ւ ալ պիտի մնան...:

Շնորհակալութիւն և մեծ զօհունակութիւն կրկին կրկին իմ և իմ զաւակացս կողմանէ այն եղանակ անձին բարեացաւորութեան որն որ մեզ յիշած է պատուական լրագրոյց միջոցաւ սիրելի ու պաշտելի Ազգիս ուշադրութիւնը զարձուցած է:

Քրիստոսի և Ազգիս ծառայ ԳԱՐԻԻԼԷ, ՔԱՅ. Ռ. ՉԻՆՃԻՐՃԵԱՆ

13 Մայիս 1901 ի Գանդիէ

Արժանապատիւ

Տ. Գարբիլե Քահայ. Չինճիրճեան ի Գաղաթիւ Մեզ իմաց տրուած ըլլալով թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց հակառակ ընթացել մէջ կը գըսնուիք Գուք, անցեալ օր մեր բարապանին միջոցաւ կոչեցինք զՉեղ Յառաջնորդարան ի բացատրութիւն. բայց Գուք չ'եկար:

Այսու զբաւորապէս և վերջին անգամ ըլլալով նոյն նպատակաւ կը կոչենք զՉեղ Յառաջնորդարան, յարելով որ եթէ անմիջապէս չ'ներկայանաք մեզ և չ'արդարացնէք զՉեղ, Չեր նկատմամբ խիստ միջոցներ ձեռք պիտի աւանդէր, բարեպաշտ ժողովրդեան գայթակղութեան վերջ ստալու համար:

Մնամբ աղօթարար Առաջնորդ Եգիպտոսի Հայոց ՅՈՎԻԹ ԵՊԻՍ. ԱՅՎԱԶԵԱՆ

# Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Խարբերի միտնարաց հսկողութեան տակ գտնուող որրանոցները մասին հետագայ շահեկան տեղեկութիւնները կը գաղտնի Ծր. Պարնըմի մէկ տեղեկագրէն:

Անցեալ տարի բաւական փոփոխութիւններ տեսաւ մեր որրանոցներուն մէջ: Արապիկերի խոշաղակի որբերը Խարբերի փոխազրուեցան անցեալ ամսու, որպէս զի բաւազոյն վարչութեան մը տակ գտնուին և ուսման ու արուեստի աւելի բաւ պատեհու, թիւններ ունենան: Նոյն ատեն 64 տղայ ու 22 աղջիկ Խարբերի որբանոցները թողուցին, և տասը հատ ալ մեզան շերմատապէ, հիւանդութիւն մը որոյ զոհ գացին այս գաւառի քանի մը հազար մանուկները: Որբանոցնս ելլող 22 աղջիկներէն 6ը ամուսնացան, 4ը որբզոգուեցան բաւ ընտանիքներու կողմանէ և մնացեալը իրենց բարեկամներու քով գացին, որք կարող կը կարծուին հոգալ գանոնք: Որբանոցներէն ելլող 64 տղայոց մեծ մասը կարող է գործել և օրապահիկ մը ճարել: Որբերու ներկայ թիւը 962 է, մինչև 1,100 էր անցեալ տարի:

Այնպիսի որբանոցին 46 աղջիկներէն 30ը կապերա շինել կը սորվին, որ հին ժամանակներէ ի վեր մասնաւոր ճարտարարուեստ մ'է եղած կապերադրո՞ւթիւնը: Աղջիկներէն ոմանք ուրիշներուն սորվեցնելու աստիճան յառաջացած են այժմ: Նոյն արհեստը յաջող կերպով կ'ուսուցուի նաև Մալաթիոյ որբանոցին մէջ ու վերջերս Խարբերի ալ ներմուծուած է: Մեծ ջանքեր կը ընեն ամենէն բաւ ներկերը ձեռք բերելու, առանց լեզակի գործածութեան: Այս ներկերը պատրաստուելու կերպը գաղտնի կը պահուի այս երկրի մէջ, բայց բարեպիտաններ հազարաւոր են մեզ այդ գաղտնիքը որբերուն օգտին համար:

Խարբերու որբանոցին 23 կոշակար աշակերտները 1,117 զոյգ կոշիկ կարած են այս տարի, եւ 4,500 զոյգ ալ նորոգած: Տասը դերձակ աշակերտները 384 վերարկուներ շինած են որբ տղոց ու աղ, ջկպնոց համար, և վերջին չորս ամիսներուն մէջ, որմէ ի վեր շուկան փոխադրուած է իրենց աշխատանոցը, ուրիշներու համար իրենց կարած հանդերձներէն 2,000 զոյգ շահած են: Այնպիսի Մալաթիոյ որբանոցներու աղայք ալ մեծաւ մասամբ արհեստներ կը սորվին:

Տասնութեց աղջիկներ ստալապատութիւն կընեն հինգ կամ վեց ամիսներէ ի վեր, և 1,200 կանգուն կտաւ պատրաստած են այդպիսի ժամանակի մէջ, 35 աղջիկներ տակի ու վրայի հանդերձներ կը կարեն ու կը կարեն, քանի մը հարիւր ձեռ հանդերձ շինած են այդպիսի ժամանակի մէջ: Ուրիշներ անական գործերով կը պարապին, թէև ամեն խելահաս աղջիկ թիւ շատ արհեստական գործ մը ընելու պարտաւոր է:

Շնորհակալութեամբ ստացանք «Բանասէր»ի Գ. պրակը հետեւեալ բովանդակութեամբ:

## ԲՈՎԱՆՆԵՐԻ ԻՒՆԻՍՏԻՒՏ

Մեր հնութիւնները Կ. Յ. ԲԱՍՄԱՉԵԱՆ Հին Հիւրանի աշխարհագր. անունների մասին որոնք կապ ունին վանեան արձ. հետ . . . ԳԲ. ԽԱՂԱԹԵՆԵՆԸ Լազարեան ձեմարանի Աւետարանը . . . . . » » ՎՃԱԳԵԱՆ Բուշաներ (նամակ) ԳԲ. ՎԱՆՅԵԱՆ

Գաւ. դամազիտ, Գոնհ, գոնհիկ և Համագեմբառերը . . . . . Բ. ԹԻՐԵՆԻՔԻԱՆ Մ. Խարեն. Պամ. Հ. ուղղադրեալ և ծանօթը. Ս. Վ. ՊԱՐՈՆԵԱՆ Հարցափորձ Պր. կարիկերի «Արգարեան գրքոյց»ին . . . . . » » Մատենախօսական . . . . . Կ. Յ. Բ. (Յաւելուած) . . ՄԻՀՐԱՆ ՅՈՎԱՆՆԵՍԵԱՆ

# ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎԱՆԻ ԴԱՇՏԷՆ

«Իրիտանական բանակին հրամանատար Լորտ Բիչըրը» պատերազմին վերջ մը տալու համար Տիկին Պոթոյի, Տիկին Դուպէրի, և նախկին նախագահ Բուէթօրուսի միջնորդութեամբ դիմած է եղբւր: Անգղիացուց պատմածին նայելով՝ իբր թէ Բուէթօրուս համաձայն գտնուեցին անգղիական հրամանատարին: Գալով Պոթոյի հետեւեալ պատասխանը ուղղորդ է, Բուէթօրուսի միջոցաւ:

«Ընդ Լորտ Բիչըրին թէ տասը տարուան պաշար ունիմ առնուապէս: Երբ որ պաշարս և ուսելիքս հասնի, թշնամոյն երկրթուղին եթէ կրցայ ձեռք ձգել, դժէն կը հանեմ մէջի եղած չեղած պաշարով որմով իմ պէտքս կը գոհացնեմ»:

— Թրանսվանի պատերազմի ելքին առթիւ, «Էդմոնսթիլ-Պրանսէ» իր վերջին թիւերէն միտն մէջ հետեւեալ խորհրդակցութիւնները կը ապէ:

«Հարաւային Արիւիկէի պատերազմը զեռ աւարտած չի համարուիր, թէպէտ և տասն և ինն ամիսներ անցած են պատերազմը ծագած օրէն ի վեր: Տակաւին չի գուշակուիր թէ զորքերը երբ իրենց տեղերին պիտի վերադառնան, ընդհակառակը օր ըստ օրէ օգնութեան զօր կը կանչուի:

«Իրիտանական ելեւմտական Դիւանագետը (Նախարարը) Թրանսվանի պատերազմի առթիւ վիճակագրութիւն մը հրատարակած է՝ ուրիշ կ'երևի թէ Թրանսվանի պատերազմը 153 միլիոն սոկիի նստած է Անգղիոյ, այսինքն Գրիմի պատերազմին կրկինը: Նկատելով որ զեռ պատերազմը կրնայ երկարիլ, և սուգանքներուն նոր գուռներ բացուիլ զանազաններու, հաւանական է որ Հարաւային Արիւիկէի պատերազմի առթիւ ծախսուած գումարը 200 միլիոն սոկի անցնի»:

ՄԱԼԹԱՅԷՆ

Անցեալները Մալթայի մէջ 25,000 հոգիէ բաղկացեալ միթիւնկ մը գուռուներ է բողոքելու համար իտալերէն լեզուի բարձման և անոր տեղ Անգլիերէնի գործածման դէմ: ԴԵՐ-ԷՒԳՈՍՏՈՍ ԷՈՂԱՐՏԻ ՄԱՆԸ

Հայ ժողովուրդը իր ճշմարիտ բարեկամներէն մին կ'որոնցուց այս օրերս Մր. Մ. Հովարտի մահուամբը, որը քանի մը տարիներէ ի վեր Անգլիական զեռ հեղատոտութեան պաշտօն կը վարէր Ալպանիոյ մէջ: Շատեր պիտի յիշեն թէ Մր. Հովարտ Վան կը գրաւուէր Սասունի կողորածին ատեն իբր

Իրիտանական հիւպատոս Իր կեանքին վտանգը աչքը տանելով Մր. Հովարտ զնաց մինչև Սասունի տահմանները և յաջողեցաւ սրբազն ուղիարհի առջև կատարուած բարարարութեան կոտորածը: Այս քով և սղնուտիտ անձն էր, որ արձակ ուղիարհանց Հայ ժողովուրդը այդ վիճարական բանակային անդու ճարածանայ դէմ: Ամբողջ Հայ ազգը պիտի միտնայ մեզ հետ սգալու մահը անձի մը՝ որ պատրաստ էր միշտ գիւանդիտական պահանջներէն վերադառնալու իր արդարասիրական զբաղումները, և ոչ մէկ պարագայի մէջ վարանեցաւ իր անկեղծ բարեկամութիւնը յոյց տու Հայ ժողովուրդեան:

# ՏԱՐՈՐԵԱՆ ԿՏԱՎ ՄԸ

Անուստի կտակ մը՝ որ կատարուի կը սկսի ու կատարուի կը վերջանայ:

Բոլորնիցի մեծահարուստ արուեստաւոր մը կը մեռնի, ու իր թողութեան մէջն նամակ մը կ'ընէ խոշոր պահարանով վրան կնքուած: Պահարանին ձախար գրուած է խոշոր գիրերով «մարմինս այրելու վերջը, բացուի այս նամակս»:

Մարմինը այրելու վերջը, պահարանը կը բանան, մէջէն ուրիշ նամակ մը կ'ընէ, զարձակ պահարանը բա մը կնքուած, տասր ձախար ալ գրուած է «այս նամակս առաջինը վեց շաբաթ ետքը թող բացուի»: Վեց շաբաթ ևս անցնելէն վերջը, նամակը կը բանան մէջէն ուրիշ նամակ մը պահարանը կնքուած ու ձախար գրուած «տարի մը վերջը բացէք այս նամակս»:

Տարին կ'անցնի, ժառանգորդներուն համբերութիւնն ալ կը հասնի, պարագաւ խեղ կըլլան թէ տասր վերջը ո՞ր պիտի երթայ: Ինչ և իցէ բացման պայտանածամբ կը լրանայ, նամակը կը բանան, ինչ տեսնեն աղի, կրկին նամակ, կրկին պայտանածամբ նամակ նամակի մէջէն, անվրոք անվրոքի մէջէն վերջը չի գար, մինչև որ խեղձ ժառանգորդներուն մարը կը սկսի ձեռմկնալ լճեղախալու:

Վերջապէս այսքան կատակ ետք հինգերորդ նամակին մէջէն կ'ըլլայ կտակը: Մեռնողը իր հարստութեան կէսը 150 հազար առաքի կը թողու և շատ զաւիտ տէր ժառանգորդներուն: Մնացեալ կէսն ալ կը հրամայէ որ Պանգան գրուի, հարիւր տարի վերջը իր սոկոտովը միտնի անուի Պանգան ու ժառանգորդներուն մէջ բաժնուի:

# ՄԱՐԴԱՀՆՄԱՐ ՄԸ

Անգղիոյ վաճառականութեան Միտնարը հրատարակած է Անգղիացիներուն դաղթելուն վրայ մարդահամար մը, որմէ հետեւեալները կը բաղկեն:

1900 թուականին Անգղիայէն գաղթած են 169,463 մարդիկ, ինչ որ 23,103 գաղթող աւելի կը ներկայացնէ քան թէ 1899 թուականը:

Այս 169,463 մարդիկ գաղթողներն 102,841 հոգի Միացեալ-Նահանգներն են գնացեր, 20,757 հոգի Բարեկոտոյ գլովոր գնացեր են և ամանք ի Նաթալ, 98,818 հոգի գնացեր են Գանատա, 14,970 Աւստրալիա:

Գրեթէ բոլոր իողանալիները գաղթել են Միացեալ-Նահանգները:

Այս մարդահամարին նայելով Անգղիացիներուն գաղթելը տարուէ տարի կ'աւանայ: Վերջին օրերս Գոյմար բաղաքին մէջ մեծաւ երիտասարդ հսկայ մը, որ իրտասա-

տան ծնած և 12000 մարդի վաճառուած էր թաւարնի սնորհի մը, սրան հետ նա բոլոր աշխարհ կը պատը քանի մը տարիներէ ի վեր:

Այս երիտասարդը որուն հասակին երկարութիւնն էր 2 մեք և 38 սանդիմեթր գծազգաբար իր հասակին համապատասխանող ստողութիւն մը չունէր: Հիւանդութեան մը բնուէրով պէտք եղաւ հիւանդանոց տանիլ զայն: Բայց, սրտածմիկ մանրամասնութիւն, և ոչ մէկ անկողին բաւական երկարութիւն ունէր զայն պարտկելու համար:

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Փարիզ 6 Մայիս 1901

Պրանսայի մէջ 1900ի պիտակ բուսարիւթներն ի վեր հեծելանիւթի (պիտիկէթ) խմբեր կազմուեցան Մեն Միւրհիլի, Կանսիլի և Լիւնվիկի բանակներուն մէջ և պատերազմի միտնարը այդ նորութիւնը հաստատեց մասնաւոր թղթով:

Երկու պատերազմական միտնարը՝ Զօրավար Անգրէ փափաքելով աւելի օգտակար զեր մը կատարել տալ հեծելանիւթին, որոշեց ջոկատներ կազմել ֆրանսական բանակին մէջ և այս բանին հոգը յանձնեց ար Լագոուս զօրավարին, որպէսզի պէտք եղած փորձերը կատարել տայ: Այդ փորձերը երկու զիտաւոր նորութիւններու հաստատման պատճառ եղան՝ հետիոտն զօրաց հեծելանիւթաւոր Զօկանիւթու և ձանապարհ հարթող զօրաց հեծելանիւթաւոր ջոկատ:

Հեծելանիւթ նստող հետիոտն զօրքերը նրկատուելու են, յետ այսու, իբր որոշ մարմին մը հետիոտն զօրաց բանակին, որոնք հեծելանիւթով պիտի պատին: Եթէ ասանք մէկ կողմէն մեծ ծառայութիւններ կրնան մատուցանել բանակին, անմիջապէս որոշ թուով հրացաններ տեղափոխելով, միւս կողմէն սորա չեն կրնար իրենց ետնն ու երկու կողմերը պաշտպանել, բան մը որ յանձնուած է հեծելազօրին:

Մանուսնոց որ հեծելանիւթ ստող զօրքերը կրնան հեծելազօրին հետ քալել: Փոքր պատերազմներու մէջ որոնք հետաւոր և անմիջական օգնութեան մը կը կարոտին, հեծելանիւթները և հեծելազօրները միտնի մեծ օգտակարութիւն մը կ'ունենան, այդ պարագայներուն մէջ: Պատերազմի ժամանակ, եթէ ձիաւոր զօրաց մէկ մասը երթայ թշնամոյն վերջերն լրտեսելու, վտանգի ժամանակ հեծելանիւթաւորներն կրնան անմիջապէս պաշտպանել ձիաւորներն բանակին լուր տալով և միտնոյն ժամանակ պատերազմելով:

Երկրորդ կարեւոր հաստատութիւնն է ձանապարհ հարթող զօրաց հեծելանիւթաւոր ջոկատը:

Մինչև այսօր երբ պէտք լինէր՝ բանակին անցքին համար ճամբայներ հարթել և պատրաստել, մասնաւոր ջոկատներ բանակէն թիւ մը առաջ մեկնելով այդ գործը կը կատարէին, բայց բողոքովին վերի վերոյ և կիսկատար, որովհետև քանի մը վայրկեանէն կամ ժամէն բուն բանակը կը հասնէր:

Այսօր այդ գործն ալ յանձնուած է հեծելանիւթաւոր զօրքերին ջոկատներուն, որոնք նոյն իսկ բանակին հետ ճամբայ ելելով կրնան անմիջապէս սրողուած տեղերը հասնիլ և պէտք եղած պատրաստութիւնները տեսնել, բանակին հասնելէն շատ առաջ:

Այս վերջին ջոկատներն ալ մաս պիտի համարուին հեծելազօրին:

Այս երկու տեսակ զինուորները իրենց մասնաւոր համազգեստը պիտի ունենան,

զինուած պիտի լինին թե՛ն բայց գորաւոր  
զէնքերով և իբր հեծելազոր պիտի ունենան  
ձալուզ հեծելազոր որ ամենն յարմարա-  
գոյնն է:

Քանի որ հեծելազորի վրայ կը խօսինք յիշենք  
այն արշաւը որ տեղի ունեցաւ շաբաթ իրի-  
կունէ կիրակի առաւօտ 3, Պոտոյէն Բա-  
րիզ: Շաբաթ երեկոյ ժամը 3ին քսան և եօ-  
թը արշաւողներ (հեծելազորի վրայ նստած)  
Պոտոյէն կը մեկնին զէպի Բարիզ: Այս  
արշաւաւքին նպատակն էր իմանալ թէ վա-  
զողներն որք առաջ բարիզ պիտի հասնին և  
բանի ժամէն, բայց առանց գաղբելու:  
Արշաւողները անցան Լիպուրն, Անկուէմ,  
Ռիֆֆէ, Գուհէ վերագ, Բուսթիէ, Շա-  
թլար, Սենթ-Մօն, Թուա, Ամպուազ, Պը-  
լուա, Բոլան, Էթմար, և վերապէ քաղա-  
քներէն և հասան Բարիզ, ըսելէ 590 թիւ-  
մեղի տարածութիւն մը կամ ճամբայ մը:  
Յաղթանակը տանողն եղաւ Լէնա անուն  
պարոն մը որ շաբաթ երեկոյ ժամը 5ին  
Պոտոյէն մեկնելով կիրակի կէսօրէն յետոյ  
ժամը 2ը 53 վայրկեան անցած Բարիզ հա-  
սաւ, ամենն առաջ: Ըսել է այդ պարոնը  
590 թիւմեղը ճամբան 22 ժամէն առաւ,  
մէկ ժամուան մէջ ուրեմն՝ մօտ 27 թիւ-  
մեղը, և մէկ վայրկեանի մէջ գրեթէ 2 1/2  
թիւմեղը, բան մը սր շատ զօւար է ճանա-  
պարհի վրայ:

Սակայն այս տարուան այդ արշաւանքը  
այնչպիսի գոհացուցիչ հետեանք մը չունեցաւ  
Սպարտի տեսակետով, վասնզի տարի եղած  
է որ Պոտոյէն Բարիզ արշաւած են ուրիշ  
անձինք 19 ժամուան մէջ Բոտոյէն հասնող  
եղեր և Բարիզ, ըսել է երեք ժամ աւելի ա-  
րագ բան Պ. Լէնա, որն ինչպէս ըսինք 22  
ժամէն հասաւ:

ՄԵԼԻՒՒ Ս. ԴԱՒԻԹ ԲԷԿ

1901 Յուլիս 1-ից Պարիզում կա-  
կսի լոյս տեսնել հայերէն լեզուով  
« ԺԱՄԱՆԱԿ »

Հանդէս գրական, հասարակական,  
գեղարուեստական, քաղաքական:

ԺԱՄԱՆԱԿը կունենայ այն բոլոր  
բաժինները, ինչ որ ունին ևւրոպա-  
կան գրական հանդէսները. առանձ-  
նապէս ուշադրութիւն դարձնելով գիտ-  
նական ու գեղարուեստական բաժին-  
ների վրայ:

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատ-  
կաստականութիւն են յայտնել բազ-  
մաթիւ հայ և եւրոպացի յայտնի հե-  
ղինակներ, որոնց երկերը արդէն ստա-  
ցել է խմբագրութիւնը:

ԺԱՄԱՆԱԿը բազմապէս կը լինի 5  
ուպագրական թերթերից (80 երես  
La Revue et Revue des Revues  
հանդիսի զերբով:

ԺԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս  
կը տեսնի ճիշդ 1901 թուականի յու-  
լիս 1ին և ներկայ թուականին կը  
հրատարակուի երկու ամիսը մի ան-  
գամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1  
ու նոյեմբեր 1. իսկ սկսած 1902  
թուականի Յունուար 1-ից կը հրա-  
տարակուի իւրաքայլիւր ամիս:

Հարկ եղած դէպքերում, ԺԱՄԱ-  
ՆԱԿը կը լինի պատկերազարդ և կը  
ուպագրէ եւրոպական երկերի բնա-  
գիրը եւրոպական լեզուներով, հայե-  
րէն թարգմանութեան հետ միասին:

Բացուած է բաժանորդագրութիւն  
1901 և 1902 թուականներէ: Բաժա-  
նորդագրութեան պայմանները պար-  
զուած են հետեւեալ աղիւսակի մէջ  
Բաժանորդագրութիւն 1901 քուա-  
կանի (կիսամեակ)

Ռուսաստան . . . . . 3 ուրբի.  
Անգղիա . . . . . 7 շիլին,

Ֆրանսան, Պուլկարիա. Պարսկա-  
ստան, Ռումանիա. Թիւրքիա, Եգիպ-  
տոս. Յունաստան, Աւստրիա. 8 ֆրնք.

Ամերիկա . . . . . 1 գոլար (սակի)  
Բաժանորդագրութիւն 1902 քուա-  
կանի (12 գիրք)

Ռուսաստան . . . . . 10 ուրբի  
Անգղիա . . . . . 1 ֆնտ. ստերլին  
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկա-  
ստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպ-  
տոս, Յունաստան, Աւստրիա. 25 ֆրն.

Բաժանորդագրութիւն 1901 և 1902  
քուականների համար (15 գիրք)

Ռուսիա . . . . . 12 ուրբի  
Անգղիա . 1 ֆնտ. ստերլ. և 7ը շիլ.  
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկա-  
ստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպ-  
տոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրնք.

Ամերիկա . . . . . 6 գոլար  
Ամենայն տեղերից գիմել հետեւալ  
հասցէով.

Paris, (France) 64 rue Claude-  
Bernard Directeur de la Revue  
« Jamanak » S. Hakhoumian

Ա Ջ Դ

Շատերու կողմէ յայտնուած փա-  
վաքի մը գոհացում տալու և մեր  
ընթերցողներու դիւրութիւն մը ըն-  
ծայելու նպատակով, այսուհետեւ մեր  
թերթը հատով պիտի ծախուի Շա-  
րա Ապա-էլ-Ապիդի սկիզբը Պ. ԿԱՐՍ-  
ՊԵՏ ԵՐՁՆԿԱՑԵԱՆԻ խանութը:

ՏՈՒՒԱ ՄԻՒԶԻԿԱՆ

(ԻՍՒԱՄԱԿԱՆ ՕՐԷՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն հրատարակութեան առաջին  
մասը՝ Եգիպտական արդարութեան  
Գործոց Նախարարութեան կողմէն  
նիւթական վարձարութեամբ դիւ-

հատուած և Եգիպտոսի դատարաննե-  
րուն մէջ գործածութիւնը պաշտօ-  
նապէս ընդունուած է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն ժառանգական  
օրինաց և ժառանգութեան իրաւանց  
ձագման վրայ. — Ժառանգութեան  
պայմանները. — Ազգականութիւն և  
աստիճանները. — Գերութիւն և ժա-  
ռանգութեան հետ ունեցած կապերը. —  
Ժառանգութեան զրկող պատճառներ. —  
Մարդասպաններու ժառանգութիւնը.  
— Տէէթ (մարդու արեան գինը). —  
Ժառանգութեան մը պարտքը և պա-  
հանջը. — Ժառանգորդներու կարգը  
իրենց աստիճաններով:

Ժառանգութեան օրէնքին տրամա-  
դրութիւնները ուրոյն ուրոյն մեկնու-  
ած են: Գրքոյկին վերջը դրուած է  
ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը  
նշանակէ թէ ժառանգութեան օրինա-  
կան բաժինները ինչպէս կը բաժնը-  
րին:

Երկրորդ մասը մօտ ժամանակէ  
լոյս պիտի տեսնէ՝ Խնամակալութեան  
կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ  
վրայ ընդարձակ ծանօթութիւններով:  
Գին 10 ԴԱՀ. ՈՂ.Չ

ՊԱՆԳ ԼԻՍԵՉ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՒՐԱԿԱՒ ԵՒԴՊՏՈՒՄ

Մ. ՍՍՍՍՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութի գրամատունը,  
այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի  
գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան,  
որ իւր հրատարակային ցոյց տուած  
պարկեշտ գործունէութեամբ ամե-  
նուս վատահոլութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ.  
թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղա-  
քապետութեան պաշտօնապէս վա-  
ւերացուած փոխանորդագրի համա-  
ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի  
միջոցաւ ամեն տեսակ դրամական և

Քուէտի ֆոնսիյէի, վիլ աը Բարիի և  
Գաղղիական ամեն արժեթուղթերու  
գործողութիւններ, դանձումներ: Ամա-  
կան չնչին գումարի մը խնայողու-  
թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն,  
պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա-  
հանութեամբ երաշխաւորուած:

Փափարողները հաճին գիմել նիւ-  
պատի վրայ փաստարան Ռաբթաքիի  
գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ գրը-  
կել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՍՍՍՅԵԱՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ՊԵԼԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ՍՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐԱԿՆԵՐ

ԱՐԱՆՆ ԵՒ ՏԻԿԱՆՆ

ԵՒ ԶԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑ

Ապսիցի մեծ պողոտային վրայ Տայիտի  
Սանկիյի զինացը, ճախիկն ելիցարական  
գործիներու վաճառուները:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած  
հաստատուած ըլլալով կը յայտարա-  
րենք արդոյ հասարակութեան թէ՛  
պատրաստ ենք գոհացնել մեզ գիմոյ  
Պատ. յաճախողները, գործի մար-  
բութեան, գիներու չափաորութեան  
և ճշգրտահոլութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւան-  
դուին նաեւ ձեւագիրութեան դասեր  
ամերիկեան ամենավերջին կատար-  
ւազորուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել  
մեր գործատեղին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միոքիւն». — Թ. Ս. Փափագիւսի

Տ Պ Ա Ր Ա Ն  
Մ Է Ա Թ Թ Ա Մ Ի  
Ի ԳԱՀԻՐԷ  
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԺԻՇԴ ԴԻՄԱՑ  
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ  
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-  
րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր,  
հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակազրուիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ են:  
Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով եւ ճշգրտութեամբ:  
ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ